

# ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ



ԱՅԾԵՄԻԿ ԿՈՐԿՈՏՅԱՆ

## ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԲԱԶՄԱՇՆՈՐ Հ ԱՌԱԶՆՈՐԴԸ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՔԵ ՊԻՍԿՈՊՈՍ ԿԵՍԱՐԱՅԻ

1624-1626 թվականներին Պարսկաստան այցելած քարոզիչ Եղբայր Եվջենիոսի Բենեդեկտտո Կարմելյան մեծավորը Ս. ժողովին ներկայացված զեկուցագրում անհրաժեշտ է նկատում շարադրել Նոր Զուղայի հայկական համայնքից ստացած իր տպավորությունը. «Ասպահանու հայերու մէջ ժամանակէ մը ի վեր երևան եկած են քանի մը անձնատրութիւններ, որոնք կ'ապրին արտաքոյ կարգի խիստ կեանք մը եւ կը վայելեն ժողովրդեան քով սրբութեան հռչակ: Անոնք վարդապետ կը կոչուին. բաժնուած զանազան հայաբնակ վայրերու վրայ՝ առաքելաբար կը շրջին երկրէ երկիր, գիւղէ գիւղ քարոզելով, ուսուցանելով և խորհուրդներ մատակարարելով: Ասկէ առաջ առ ի չգոյէ վարդապետութեան, յորդորի եւ օրինակի, շատերը կ'իյնային մեծամեծ մեղքերու մէջ, այսպէս՝ կ'արձակէին իրենց օրինատր կիներն եւ ի նորոյ ամուսնութիւններ կը կնքէին, իսկ ուրիշներ...»<sup>1</sup>:

«Արտաքոյ կարգի խիստ կեանք» ապրող և «սրբութեան հռչակ» վայելողներից մեկը կամ, նույնիսկ, գլխավորը խաչատուր վարդապետ Կեսարացին էր, որի գործունեությունը մեծապես պայմանավորեց Նոր Զուղա և նրան հարող շրջանները բնակեցված հայության, ապա նաև իր ժամանակի արևելահայության մշակութային առաջընթացը: Հնազանդություն, աղքատություն, ողջախոհություն պահանջող խստակեցությունը Նոր Զուղայի հոգևորականները, հանձին իրենց առաջնորդ խաչատուր Կեսարացու, ժառանգել էին Սյունյաց մեծ անապատից, որի «Սահմանքի» (իմա՝ Կանոնադրություն) հիմնական կետերը ներկայացված են Առաքել Դավրիժե-

<sup>1</sup> Զեկուցագրի քաղվածաբար հայերեն թարգմանությունը տես՝ Հ. Ն. Ակիմեան, Մովսես Գ. Տաթևացի Հայոց Կաթողիկոսն ու իր ժամանակը: Վիեննա, 1936, էջ 167-168:

ցու երկում<sup>2</sup>: Անապատի հիմնադիրները հանգամանորեն ծանոթացել էին Պաղեստինի, Եգիպտոսի, Սինայի անապատականների միաբանությունների ունեցած կարգին և ընդունել Մեծ անապատի պայմաններին ու նպատակներին պատշաճող սկզբունքներ:

Մասնավորապես՝ «Պարտ է անապատատրաց միայն կալ եւ ժուծել ի խցի, եւ պահել զմիտս եւ զխորհուրդս սուրբս ամենայն անմաքուր մտածութեանց հոգեկանաց եւ մարմնականաց. եւ թող զկամս իւր եւ լինել հնազանդ եւ կատարող կամաց առաջնորդին, եւ ոչ լինել ունեք ստացուած առանձին... եւ ինչ ոչ ունել ի խցի եւ կամ ուտել. եւ հանապազօր ի տարին պահօք անցուցանել՝ բաց ի շաբաթ եւ ի կիրակի եւ ի տէրունական տօնից...» և հազմել «զսքեմն եւ զցսպիսն, որ է մազեղէնն ի ներքոյ զգետուցն ի վերայ մերկ մարմնոյն...»<sup>3</sup>: Խաչատուր Կեսարացին ուսանել էր այս անապատում, աշակերտել 1613 թվականից հաստատությանը միաբանած Մովսես Տաթևացի վարդապետին, որը շուտով Ամենայն Հայոց Կաթողիկոս և դարաշրջանի հայոց մշակութային կյանքը վերակերտող պիտի դառնար: Աղբյուրների ուսումնասիրությունը արդարացնում է լատին հոգևորականի գործածած «արություն հոչակ» արտահայտությունը, ինչպես կհամոզվենք առաջիկայում՝ ձեռագրական հիշատակարանները վկայակոչելիս:

Խաչատուր Կեսարացու ինքնությանը վերաբերող անդրանիկ տեղեկություն գտնում ենք նրա ժամանակակցի՝ Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրության» 1616-1618 թվականներին առնչվող անցույթների նկարագրության դրվագում. «... Եւ Իկե (1616) թուականին հրաժարեցի կամօք իմովք ... եւ ... ուղի անկեալ զնացաք յԵրուսաղէմ, երկու Ջատիկ անդ արարաք: Եւ նաւեպլ զնացաք ի Կիպրոս, եւ ելալ յանապատ մի ի միաբնակաց վանսն, որ սուրբ Մակար ասի, որ էր խթթոց ազգացն, նոքա սպառեք են, մեր ազգացն են տուեր, որ կայր անդ ի մեր ազգացն երկու արեղայ, մէկ քահանայ Խաչատուր անուն, եւ որ այժմ վարդապետ է եւ առաջնորդ Ջուղայոցն, եւ միւսն վարդան մոնոզոն, որ այժմ քահանայ է... զի նա է հայր վանացն, եւ երկու-երեք այլ աղօթատր ծերք: Եւ կացաք... անդ երկուտասան ամիս...»<sup>4</sup>:

Նախ ճշտենք տեղեկության ժամանակագրական ցուցումները. 1616 թվականի Ջատիկից առաջ նա դուրս է եկել ճանփորդության, «երկու Ջատիկ» կատարել Երուսաղեմում, ասել է, թե՛ կիպրոս է մեկնել 1617 թվականի ապրիլից հետո և այնտեղ մնացել մեկ ամբողջ տարի, ուրեմն մինչև 1618 թ.: Դարանաղցին Սուրբ Մակարի

<sup>2</sup> Առաքել Դարիժեցի, Գիրք պատմագրութեանց, աշխատասիրությանը Լ. Ա. Խանյարյանի: Երևան, 1990, էջ 218-220:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 219-220: «Սահմանքի» հիմնական պահանջները համարակալ թվարկումով տե՛ս Հ. Ն. Ակիմեան, Ձշվ. աշխ., էջ 165-166:

<sup>4</sup> «Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամխեստյ կամ Դարանաղցոյ»: Հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան: Երուսաղէմ, 1615, էջ 183:

վանքում հաստատված է տեսել խաչատուր Կեսարացուն և որովհետև իր ապրած-  
 ժամանակահատվածում խաչատուրի մեկնումի մասին չի հիշատակում, ուրեմն նա  
 վանքում է գտնվել<sup>5</sup>: խաչատուրի՝ Կիպրոս գալու պատճառները մասամբ կոստանդի  
 են դառնում Դարանաղցու այն տեղեկությամբ, թե նա քահանա է եղել և հետագա-  
 յում է վարդապետ ձեռնադրվել ու Զուղայի առաջնորդ նշանակվել: Հետևաբար՝ այ-  
 րիացած և աշխարհիկ քահանայությունից հրաժարվող խաչատուրը նախընտրել է  
 վանական կյանքը, և որովհետև այս շրջանում արևմտահայոց միջավայրում Պոլսո  
 պատրիարքարանին ենթակա վանական հաստատությունները խիստ սակավաթիվ  
 էին (Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին, Կիպրոսի Ս. Մակար), Գրիգոր Կեսա-  
 րացու սանը ոչ պատահականորեն հայտնվել է Կիպրոսի վանքում (Արմաշավանքը  
 այս տարիներին բավականին աղետյալ վիճակում էր, որի վերանորոգումը հոգում  
 էր դարձյալ նույն Գրիգոր Դարանաղցին)<sup>6</sup>:

Ինչպես երևում է նույն Դարանաղցի պատմիչին պատկանող ձեռագիր Աստվա-  
 ծաշնչի հիշատակարանից, Կիպրոսում մեկ-երկու տարի մնալուց հետո խաչատուր  
 Կեսարացին 1618 կամ 1619 թվականներին մեկնել է Երուսաղեմ և արեղա ձեռնա-  
 դրվել: Աստվածաշնչի Եզեկիելի մարգարեության վերջում-պահպանվել է խաչա-  
 տուրի հիշատակարանը. «Ջսակա աշխատողս ի սմա Կեսարացի խաչատուր ան-  
 ուսմբ միայն արեղայս աղաչեմ միով «Հայր մեր, որ յերկինս»-ի յիշել ի Տէր, եւ  
 Քրիստոս զյիշողքդ յիշէ ի միսանգամ զալստեան իւրոյ, որ է օրհնեալ յաւիտեանս.  
 ամէն: Հայր մեր»<sup>7</sup>: Ընդհանուր է, հիշատակարանը թվական չի կրում, բայց Եզեկիելի  
 մարգարեությանը նախորդող Եսայիի վերջում, որին հաջորդել է խաչատուրի ընդ-  
 օրինակումը, նշված է գրչության թվականը՝ 1617 թ. հունիսի 28, ուրեմն Եզեկիելը  
 գրված է այդ թվականից հետո և 1621 թվականից առաջ (վերջինս Եզեկիելիին հա-  
 ջորդող «Կոստանդնուսի մարգարեից» դրվագի գրչության թվականն է): 1621-ին  
 խաչատուրին գտնում ենք Երուսաղեմից Կ. Պոլիս վերադարձած և տեղիս Ս.  
 Նիկողայոս եկեղեցու (հայտնի է Կոմբուլի Ս. Նիկողայոս անունով)<sup>8</sup> Դարանաղցու  
 Աստվածաշնչի նկարչական զարդարանքը կատարելիս: Հոռոմայեցոց թղթի  
 վերջում Գրիգորի թողած հիշատակարանը տեղեկացնում է. «Գրեցաւ հիմզ տետրս  
 ի Կոմբուլի Սուրբ Նիկողոս եկեղեցիս, ի մեր նորաշէն վերանստունս... եւ զիս զան-  
 պիտան փծուն գրիչս՝ զԳրիգոր միայն անուսմբ վարդապետս եւ զՏէր խաչատուր  
 խարանազգեաց խստակրօն ամենաշնորհ արեղան՝ զբանի սպասաւորն, որ եւ

<sup>5</sup> Ի դեպ, մեր կարծիքով, Գր. Դարանաղցու գործածած «միաբնակ» տերմինը պիտի ընկալել իբրև  
 «միաբնակ» (մոնոֆիսիտ) և ոչ «միաբանություն»: Այդ հաստատվում է նաև վանքիս նախապես «խթի-  
 ներին» (ղպտիներին, կոպտերին) պատկանելու փաստով:

<sup>6</sup> Հմմտ. Գրիգոր Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 423: Արմաշի վանքի հետ կապված հարցերի քննու-  
 թյունը տե՛ս Պ. Մուրադյանի «Արմաշի վանքը» գրքում: Երևան, 1998:

<sup>7</sup> Տես՝ Գրիգոր Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 606:

<sup>8</sup> Կոմբուլի կամ Կեօմբուլի Ս. Նիկողայոս եկեղեցին գտնվելիս է եղել Էտիրնե Գաբուի մոտ, որի  
 տեղում այժմ Քեֆելի ճամփն է:

աշակերտ գրոց եւ հնազանդ մեզ, որ աշխատեցաւ ի ոսկելն եւ ի ծաղկելն, եւ զամենայն աշխատաւորսն մեր յիշեալիք ի Քրիստոս...»:

Գրիգոր Դարանաղցին զովետների մեջ առանձնապէս թաւեր շուայլող հեղինակ չէ, ուստի. խաչատուրին բնորոշող արտահայտությունները պիտի համարել միանգամայն իրական ու բովանդակային բնութագրումներ: «Խարազնագգեստ խըստակրօն» կենցաղավարությունը, ինչպէս տեսանք, գալիս էր Սյունյաց Մեծ անապատի կանոնքի պահանջներից, որտեղից և ժառանգել էր խաչատուր կեսարացին և հետագայում գործադրել իր առաջնորդության տարիներին Նոր Ջուղայում: Կարմելյան մեծավորն այստեղ էր տեսել այդ յատակեցությունը և անհրաժեշտ ձկատել արձանագրել իր զեկուցագրում:

Խիստ տարողունակ են հիշատակարանի վյուս զնահատությունները՝ «ամենաշնորհ արեղա» և «բանի սպասաւոր»: Առաջինի տակ նախ գրչությունն ու ծաղկման հմտությունն պետք է հասկանալ, որը թե՛ գրիչ ընդօրինակող է (այդ մասին էր խոսում նախորդ հիշատակարանը), թե՛ «ոսկող» ու «ծաղկող», միաժամանակ նաև՝ «բանի սպասաւոր», որ Ս. Գրքի իմացությունից ու աստվածաբան լինելուց զատ քարոզչական կարողություն է վկայում: Գրիգոր Դարանաղցին ոչ պատակահաճողորեն է մասնավորեցնում, թե այդ ամենով օժտված արեղան «աշակերտ գրոց և հնազանդ մեզ» է: «Գրոց աշակերտը» վարդապետի ղեկավարությամբ ու վերադիտությանմբ աստվածաբանության մեջ հմտացողն է: Եվ հիրավի, իր «Ժամանակագրության» մեկ այլ դրվագում Գրիգոր Դարանաղցին անհրաժեշտ է ձկատում Ս. Նիկողայոսի նույն եկեղեցում խաչատուր կեսարացու ներկայությամբ կատարված մի այլ իրողության մասին պատմել: Այն օրերին, երբ պատմիչը Արմաշի և Պալատի Ս. Հրեշտակապետաց եկեղեցիների կառուցման համար (ավելի ստույգ՝ վերակառուցման-նորոգման համար) հանգանակություն էր կատարում, Չանկչի անունը կրող մեկը զանազան «հրաշագործություններ» է կատարում, որին և հանդիպում է Կոմրուկի Ս. Նիկողայոս եկեղեցու արեղա Հակոբը: Չանկչին փող է կորզում այս արեղայից. «Եւ անդ լինէր խաչատուրն, որ այժմ վարդապետ եւ նախկոպոս է ի Սպահան, յայնժամն աշակերտ անուն էր առ մեզ. նա աղաղակեաց ասելով թե՛ Մի հաւատար, սուտ է նա և այդ ոսկերքդ այդպէս չար հնարիք կու եփէ ու կու վաճառէ, եւ գիտեմ զնա ի վաղուց հետէ, նա շատոց է վաճառել ձեռք եւ գլուխ եւ բազուկք եւ այլ ոսկերաց: Եւ այնմ բանից փորձ առաք ի վերայ հիւանդաց եւ ոչ մի նշան չտեսաք, որ այնու յայտ է սրբոցն ոսկերն լինելով և մանաւանդ որ նորագիտ լինի...»<sup>9</sup>:

Այստեղ մեզ համար կարևորը սուտ հրաշագործի խաբէբայության իրողությունը չէ, այլ որ Գր. Դարանաղցին նորից հիշեցնում է խաչատուրի «յայնժամն աշակերտ անուն» առ ինքը լինելը, միայն անհրաժեշտ է պարզել, թե այդ «յայնժամն» տակ իրականում ո՞ր թվականը կամ տարին պիտի հասկանալ: Չանկչիին վերաբերող դրվագի սկզբում նրա երևալը «ի կողմանս Նիկիոյ» թվագրված է ՌՀԲ (1623), որը

<sup>9</sup> Գրիգոր Դարանաղցի, նշվ. աշխ., էջ 425:

քնավ չի համապատասխանում Խաչատուր Կեսարացու կենաց տարեգրությունը ներկայացնող մյուս աղբյուրների հաղորդումներին: Ընդհանուր է, Գրիգոր Դարանաղցին ոչ միայն ժամանակակից է, այլ նաև նրա ուսուցիչներից մեկը, և այնուամենայնիվ՝ վերջին դրվագի եղելությունը 1623 թվականով արձանագրելը ստույգ չպետք է լինի: Նախ հիշենք, որ Դարանաղցին վկայակոչվող ժամանակագրությունը գրելավարտել է 1636 թվականի անցքերի հիշատակումով<sup>10</sup>, ուրեմն 20-ական թվականների եղելությունները կարող է տարեգրել հիշողությամբ, ուստի և, հավանաբար, վրիպումով: Խնդիրն այն է, որ մենք ձեռքի տակ ունենք 1623-ին վերաբերող երեք միմյանցից անկախ աղբյուր, և այդ երեքն էլ Խաչատուր Կեսարացուն ճանաչում են իբրև արդեն Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդ: Այսպես. Սիմեոն Զուղայեցի քահանան Հայոց Ռ՛ՀԲ (1623) «ի մայրաքաղաքս Ասպահան, որ Ծօշ կոչի, ի թագաւորութեան պարսից Ծախ Ապասին և առաջնորդութեան մերոյ գեօղիս Զուղայոյ Խաչատուր վարդապետին, Խաւջայ Նազարին» ընդօրինակում է Գր. Տաթևացու «Հարցմանց գիրքը»<sup>11</sup>: Խաչատուրի առաջնորդության այդ նույն 1623 թվականն են հավաստում այլ ձեռագրերի հիշատակարաններ ևս՝ մասնավորեցնելով, թե ընդօրինակությունը կատարվել է «ի մեծ թուականիս Հայոց Ռ՛ՀԲ (1623) ի Ծօշ քաղաքս՝ Ասպահան, ի հայրապետութեան տեսոն Մելքիսէդ Կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ յառաջնորդ մերոյ Աթոռոյ սբ. ուխտի Ամենափրկչի վանացս Խաչատուր րաբունապետին, եւ թագաւորութեան...»<sup>12</sup>:

Այսպիսով, հիմք ունենք եզրակացնելու, թե Խաչատուր Կեսարացու առաջնորդությունը Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքում սկսվում է 1621-ից հետո և 1623-ից առաջ: Անշուշտ, կարելի էր Պոլսից մեկնելու և Նոր Զուղա գալու տարի նշանակել այդ երկու թվականների միջև ընկած 1622-ը, բայց մնան եզրակացությունը փակում է Խաչատուր վարդապետի կենսագրության այլ մանրամասնությունների ուսումնասիրության դուռը: Այսպես. Նոր Զուղայի պատմության երախտաշատ ուսումնասիրող Հարություն Տեր-Հովհաննյանը վստահ է, թե Խաչատուր վարդապետը Էջմիածնից մվիրակական պաշտոնով 1620-ին եկել է Նոր Զուղա և նույն թվականին էլ «ըստ խնդրոյ ժողովրդեանն» ստանձնել առաջնորդության Աթոռը<sup>13</sup>:

Հ. Տեր-Հովհաննյանը, պիտի ենթադրել, չէր կարող ծանոթ լինել Մաղաքիա արքեպս. Օրմանյանի սեփականությունը հանդիսացող ձեռագիր Աստվածաշնչի հիշատակարաններին, որոնցից մեկը, ինչպես վերևում տեսանք, գրված պիտի լինի

<sup>10</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 585:

<sup>11</sup> Տես՝ Ցուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հատ. Ա, կազմեց Սմբատ Տեր-Աւետիսեան: Վիեննա, 1970, էջ 763:

<sup>12</sup> Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հատոր Բ, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան: Երևան, 1978, էջ 100 (այսուհետև՝ ՀԶՀ, ԺԷ դար): Հմմտ. նշվ. աշխ., էջ 107: Վերջինս նույնական է նախորդ ծանոթագրության մեջ հղվածին:

<sup>13</sup> Պատմություն Նոր Զուղայոյ, որ յԱսպահան, աշխատասիրեալ ի պ. Յարութիւն Թ. Տեր-Յովհաննեանց, հատոր Բ: Ի Նոր Զուղա, 1881, էջ 22 (այսուհետև՝ Հ. Տեր-Յովհաննեանց, Պատմություն...):

1621-ին Կ. Պոլսում և խոսում է խաչատուր արեղայի ձեռքով «ուկած» ու «ծաղկած» լինելու մասին: Ուրեմն, ըստ այս տեղեկության, նա չէր կարող 1620-ին Էջմիածին, ապա և իբրև Ավիրակ Նոր Ջուղա եկած և առաջնորդություն ստանձնած լինել<sup>14</sup>: Արդ, Ջաքարիա Էջմիածնեցի գրչի 1625 թ. հիշատակարանից տեղեկանում ենք, որ Մովսես Տաթևացի «հեզահոգի և տիեզերալոյս մեծ վարդապետը» և Երևանի Ս. Անանիայի «քաջ բարունապետը» «...ի ժամանակս ծերութեան իրոյ ի բաց ընկեց գտկարութիւն մարմնոյ, գնաց ի Պարսկաստան եւ քարոզեաց զագգս քրիստոնէից եւ ուղղեաց զամենայն կարգ և սահմանք եկեղեցոյ: Եւ նստոյց անդ մի ի պատուական աշակերտաց իրոց տէր խաչատուր Կեսարացին հովիւ և վարդապետ: Եւ ինքն դարձեալ եկն երկիրս մեր Էրեւան, ի սուրբ ուխտս առաքելոյն Անանիայի»<sup>15</sup>:

Մինչ առաջնորդության տարին ճշգրտելը փորձենք պարզել, թե ե՞րբ կարող էր խաչատուր Կեսարացին աշակերտած լինել Մովսես Տաթևացու: Առաքել Դավրիժեցին ևս 1630 թ. Ավիրակության մեկնելու կապակցությամբ հիշում է, որ խաչատուր Կեսարացի վարդապետը Մովսես Կաթողիկոսի (իմա Տաթևացու) «Մեծ աշակերտն» է<sup>16</sup>: Ինքնին հասկանալի է, թե այս տեղեկությունները չեն կարող վերաբերել Երևանում, ապա և Էջմիածնում Մեղքիսեք վարդապետ Վժճնեցու դպրոցին, ուր Ավիրակությունից վերադառնալուց հետո ունկնդիր եղավ խաչատուր վարդապետի աշակերտ Սիմեոն Ջուղայեցին<sup>17</sup>: Մովսեսին աշակերտելու համար, կարծում ենք, խաչատուր Կեսարացին ուսանած պիտի լիներ Սյունյաց Մեծ անապատում, ուր երկու տասնամյակ գործում էր Մովսեսը: Ի դեպ, նրանք գուցեև միասնաբար եղել են Գրիգոր Կեսարացու սաները՝ հիմնականում նրա բազմակի (հինգ անգամյա) պատրիարքացման տարիներին: Ցավոք, տվյալներ չունենք մասնավորեցնելու, թե ե՞րբ է խաչատուր Կեսարացին դարձել իր ավագ սերնդակցի աշակերտը, բայց հիմք չունենք կանխածի տակ առնելու այդ իրողությանը վերաբերող տեղեկությունները: Ի դեպ, Հ. Տեր-Հովհաննյանը համոզված չէ, թե Մովսես Կաթողիկոսի կողմից Ավիրակության ուղարկված խաչատուր վարդապետը նույն Նոր Ջուղայի առաջնորդ Կեսարացին է, ուստի անհավատալի է համարում Մ. Չամչյանի երկում եղած նույնացումը<sup>18</sup> և երկու խաչատուր վրդ. Կեսարացու գոյության ենթադրում<sup>19</sup>:

<sup>14</sup> Պիտի ենթադրել, որ Ա. Ալպոյաճյանը մկատել է ճշյալ 1620 թվականի հակասությունը այլ աղբյուրների հաղորդումներին, ուստի առանց մանրամասնությունների մեջ մտնելու սրբագրել է այն 1621 (տե՛ս Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ դպրոցի: Գահիրէ, 1946, էջ 526):

<sup>15</sup> ՀՁՀ, ԺԷ դար, հատ. Բ, էջ 175:

<sup>16</sup> Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 298:

<sup>17</sup> Այդ դպրոցի մասին տե՛ս Հ. Ն. Ակիմեան, Մովսես Գ. Տաթևացի, էջ 200-207, նաև՝ Խաչիկ Սամուելեան, Մեղքիսեք վարդապետ Վժճնեցին և Ոսկան Երևանցու ուսումնառութիւնը Երևանում 1631 թուականին, «Հայկազեան հայագիտական համդէս», հատ. ԺԸ: Պեղորոք, 1998, էջ 75-86:

<sup>18</sup> Պատմութիւն Հայոց, յօրինեալ ի հայր Միքայել վրդ. Չամչեանց, հատոր Գ: Վեմստիկ, 1786, էջ 633-638:

<sup>19</sup> Յ. Տեր-Յովհաննեանց, ճշվ. աշխ., էջ 24-25, ծան. 2:

Սակայն կասկածը անհիմն է, որովհետև Մ. Չամչյանը վերնշարադրում է Առաքել Դավրիժեցուց և ժամանակի այլ աղբյուրներից քաղած նյութերը: Նվիրակության մեկնող Խաչատուրը Կեսարիայում խորհրդակցում է Գրիգոր վարդապետի հետ (նա նոր էր հրաժարվել 1626-1629 թվականներին հիանգերորդ անգամ պատրիարքական աթոռակալությունից), որը հրաշալի գիտեր Լեհաստանում ու այլ երկրներում հայոց միջավայրում տեղի ունեցող դավանական-մշակութային անցուղարձերը: Բավական է հիշել թելուզ, որ նա եռանդագին պաշտպանում էր իր սան Մովսես Տաթևացու կեցվածքն ու բոլոր ձեռնարկումները: Գրիգոր Կեսարացին քաջություն էր ունեցել բացահայտորեն հանդիմանել Մելքիսեդեկ Կաթողիկոսին կաթողիկոսության հանդեպ ցուցաբերած հանդուրժողականության և Հոռմից օգնության ակնկալիքներ ունենալու համար: Ահա մի հատված առ կաթողիկոս հասցեագրած նրա թղթից. «Մանաւանդ քան զամենայն մեծ չարիքն այս եմ, որ զքո ձեռագիրն ետուր Փափուն, թէ ես՝ Մելքիսեդ Կաթողիկոս Հայոց իմ ազգիս վարդապետօք, եպիսկոպոսօք եւ համայն ժողովորոյք հնազանդիմք Հոռմայ Եկեղեցւոյն եւ ընդունիմք զժողովն Քաղկեդոնի եւ գտումարն Լեւոնի, եւ ճգովեմք զԴեռուկորոս եւ համախոհք նորա եւ ասեմք... եւ ձեռագրիս օրինակն Փափն գրել է պասմայ գրով եւ յուղարկել է ի Լեհ, նոյնպէս եւ ամենայն տեղիս...»<sup>20</sup>: Թղթում առանձին կետ է հատկացված կաթողիկոսի ուղարկված նվիրակներին. «Եւ երկրորդ անկարգութիւն այն է, որ թէ յինչ երկիր որ նուիրակ յուղարկես՝ նա կու ընտրես՝ յոր տեղ որ չար եւ լիրբ, անզգամ, անամօթ եւ ամբարտաւան մի կայ, որ ո՛չ յԱստուծոյ երկնչի, եւ ո՛չ մարդկանէ ամաչէ, զայնպիսիքն կու առաքես...»<sup>21</sup>:

Խաչատուր Կեսարացին լիովին գոհացնում էր այն պահանջները, որ նվիրակին ներկայացնում են Գրիգոր Կեսարացին ու նրա ժամանակակիցները: Առաքել Դավրիժեցու խոսքերով ասած՝ «Եւ էր Խաչատուր վարդապետն այր հեզ եւ հանդարտ եւ քաղցրաբարոյ, ոչ անիմաստ եւ անբան, այլ իմաստուն եւ բանիբուն, որ լոկ տեսութեամբ միայն շահէր զառ ինքն պատահեալսն, որոյ վասն զնա կարգեցին նուիրակ»<sup>22</sup>:

Այսպիսով, Խաչատուր Կեսարացին հիրավի աշակերտել է Մովսես Տաթևացուն, նրա առաջադրմամբ ու հորդորով դարձել նորահաստատ Ամենափրկիչ վանքի առաջնորդ (ուրեմն և՛ թեմակալ), իսկ այնուհետև նույն Մովսես Տաթևացու (1629-ից՝ արդեն կաթողիկոս) հանձնարարությամբ մեկնել Լեհաստան նվիրակության: Նրա կենաց տարեգրության որոշ հարցեր իրենց լուծումն են գտնում Ամենափրկիչ վանքի «ի ներքնահարկի սեղանոյ» գտնվող «յետագայ արձանագրութեան» (իմա՝ տապանագրի) հաղորդումներում.

<sup>20</sup> Գ. Վ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, մասն Բ: Կ. Պոլիս, 1884, էջ 289:

<sup>21</sup> Աճղ, էջ 282:

<sup>22</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 298:

Ի հանգստի աստ ամփոփի մաքուր մարմին վարդապետի  
 Խաչատուր սրբազանի՝ հետետղի տեսան Յիսուսի,  
 Որ էր տեղեալ Կեսարացի, գործով սուրբ, հեզ եւ արի.  
 Բարձեալ լուս իւր զլուծ Քրիստոսի՝ առաջնորդէ նորին հօտի:  
 Երեսնամեայ յայս գործ յանձնի՝ սնա նստիլ յայսմ աթոռի,  
 Կրէ յանձնի զվարս անմարմնի, մնայ մինչեւ յիսուն վեցի  
 Յանցաւորացս նա զատի հազար Ղ և Ե թոփ<sup>23</sup>:

Դժվարանում ենք ստույգ որոշել, թե այս արձանագրությունը «յետագայ» կոչելով Հ. Տեր-Հովհաննյանը ի՞նչ է հասկանում «հետագայում գրված», թե՞ «ստորև բերվող»: Բոլոր պարագաներում տապանագրի բովանդակած տվյալները մեզ առավել ճշգրիտ են թվում. 1095-ին (=1646 թ.) «յիսուն վեց» տարեկան հասակում մահացած ծնված պիտի լինի 1590 թվականին, ինչպես և նշվում է նրան վերաբերող գրականության մեջ<sup>24</sup>: «Երեսնամեայ յայս գործ յանձնի» արտահայտությունը հրատարակչի իսկ արդարացի մեկնաբանությամբ երեսուն տարեկան հասակում առաջնորդություն ստանձնել է նշանակում և ոչ 30 տարվա աթոռակալություն, ուստի Խաչատուր Կեսարացին Ամենափրկիչ վանքի վանահայր ու պարսկահայոց հոգևոր առաջնորդ է դարձել 1620-ին: Ուրեմն Գրիգոր Դարանաղցու Աստվածաշնչի հիշատակարանի 1621-ը պիտի սրբագրել գոնե մեկ տարով՝ 1620 թ.<sup>25</sup>:

Խաչատուր Կեսարացու կրթա-լուսավորական, վարչական, դավանական-քարոզչական, գրական-գեղարվեստական գործունեությունը գնահատելուց առաջ անհրաժեշտ ենք համարում վերստին հիշեցնել հայոց պատմության քննարկվող դրվագում վանքերի ու վանականության ունեցած բացառիկ դերակատարումը: Հայոց գաղթաշխարհի պատմությունը սկզբնաղբյուրներով ճանաչող Ա. Ալպոյաճյանը վաղուց և իրավացիորեն նկատել է, թե «Դիտելի է, որ ԺԷ դարում սկիզբը դէպի Արեւելք եւ դէպի Արեւմուտք երկու մեծ գաղթաշարժերու ատեն եւ Օսմանեան ու Պարսիկ պետութեանց մայրաքաղաքներում մէջն ու շուրջը բաւական ստուար թոով հայեր հաստատուելէն անմիջապէս յետոյ վանքեր երեսն կու գան, բոլորովին հայ աշխարհէն հեռու: Անոնց մէջ յիշատակել պետք է Արմաշի Չարխաբան Ս. Աստուածածին և Նոր Զոտլայի Ամենափրկչեան վանքերը, որոնք գրեթէ նոյն ժամանակ կառուցուած են, զուցէ զուգադիպութեամբ, սակայն երեսութեայէն նոյն նպատակով ու նոյն ձգտումով»<sup>26</sup>:

<sup>23</sup> Յ. Տեր-Յովհաննեանց, նշվ. աշխ., հատոր Բ, էջ 24:

<sup>24</sup> Հմմտ. Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 526:

<sup>25</sup> Լ. Գ. Միմասյանի «Իրանի հայկական վանքերը» գրքի (Թեհրան, 1971) Ս. Ամենափրկչին վերաբերող էջերում Խաչատուր Կեսարացու չափածո տապանագիրը ներկայացված չէ (էջ 39-71):

<sup>26</sup> Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 525: Այստեղ չենք անդրադառնում Արմաշի վանքի հիմնադրության ժամանակի վերապահելի լինելուն:

Ջուղայեցիների գաղթի հետ առնչվող հարցերը հանգամանորեն ուսումնասիրված են հայ և օտար բազմաթիվ գիտնականների մեծագրական աշխատություններում, և այստեղ կրկին վերարծարծելը նպատակային չենք համարում: Հիշեցնենք, սակայն, որ Առաքել Դավրիժեցու նկարագրությունները միանգամայն բավարար են՝ գաղթը կազմակերպողների նպատակները, գաղթի ընթացքը և հետևանքները բավարար չափով ճանաչելու համար<sup>27</sup>: Նույն Ա. Դավրիժեցու հաղորդումից տեղեկանում ենք, որ պարսից մայրաքաղաք Սպահանում մինչև Ծախ Աբասի կազմակերպած զանգվածային գաղթեցումը որոշ հայեր արդեն կային, մասնավորապես Արցախի Դիզակ մհալից և Ագուլիսի Դաշտ գյուղից եկած. «Եւ է պատճառ Դիզակեցոց եւ Դաշտեցոց գնալոյն՝ ծանր հարկապահանջութիւնն, կեղեքելն եւ կողոպտելն եւ կոտէճութիւն առնելն եւ անխնայ սպանանելն զքրիստոնէայսն»<sup>28</sup>: Թեև հիշյալ բնակչության վերաբնակեցումը տեղի էր ունեցել մինչև «մեծ սուրգունը», բայց ոչ շատ առաջ, այլ դարձյալ Ծախ Աբասի օրոք, և պիտի ենթադրել, թե մինչև 1604-1605 թվականների գաղթաշարժը նրանք Սպահանում ինչ-որ աղոթարան պիտի ունենային: Այդ ենթադրելի է նաև հայ արհեստավորների և առևտրականների վերաբերմամբ Ծախ Աբասի հովանավորչական քաղաքականությունից ևս: XVI դարում ապրած Հակոբ աղա Ջուղայեցուն ներկայացնելու առիթով Մեսրոպ Թաղիադյանը գրում է. «...հաւաստեալ գիտեմք, որ մեր ազգի գաղթականք Ասպահանում կային շատ առաջ քան զԱ. Ծախ Աբաս. որպէս յայտնի է ի Բոհնայ մեղան շինեալ եկեղեցիէն, որ ներկայ հայերէն գրերով յիշատակարանք թէպէտեւ չի ջնջուած, բայց մզկիթ այ դարձել Հարուն Վլաթ անուամբ: ... Ձագայարոյց Կարապետ վարդապետի գմբեթակերտ շիրիմն, որպէս եւ գերեզմանք եւ հնութիւնք բազում կարող են հաստատելն, որ Աղայ Յակոբ այս Նոր Ջուղոց յառաջ գաղթական հայերիցն այ»<sup>29</sup>: Ծախ Աբասի գաղթաշարժի հետևանքով Պարսկաստանի մայրաքաղաքում ձևավորվեց մի նոր թաղամաս կամ արվարձան՝ Ջայանդերտոլ գետի աջ ափին, Սոֆի անունը կրող լեռան ստորոտին: Մակուլմի հայթայթած-վիճակագրական տեղեկությունների համաձայն մայրաքաղաքում բնակություն հաստատած հայկական

<sup>27</sup> Խնդիրն վերաբերող առավել կարևոր հրատարակություններն են. Յ. Տեր-Յովհաննէանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հատոր Ա: Նոր Ջուղայ, 1880, հատոր Բ, Նոր Ջուղայ, 1881: «Հայ ժողովրդի պատմություն», հատ. IV: Երևան, 1972, էջ 95-128 (որվագի հեղինակն է ակադ. Ա. Գ. Հովհաննիսյանը), Բ. Ա. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII веке. Ереван, 1969, Ծ. Լ. Խաչիկյան, Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում: Երևան, 1988, Vazken S. Ghougassian, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century. Atlanta Georgia, 1988; Ina Baghdiantz McCade, The Shahs Silk for Europe's Silver. The Eurasian Trade of the Julfa Armenians in Safavid Iran and India (1530-1750). Atlanta, Georgia, 1999.

<sup>28</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 63-64:

<sup>29</sup> «Ազգասէր», 1845, N 8, էջ 62:

ընտանիքների թիվը հասնում էր 2500<sup>30</sup>, որ Ա. Գ. Հովհաննիսյանի հաշվումներով հավասար պիտի լինի մոտ 30 հազար բնակչի<sup>31</sup>: Պիտի ենթադրել, որ Հ. Ալամդարյանի հիշատակած եկեղեցին վաղուց արդեն կա՛մ չէր գործում, կա՛մ պարզապես այլևս պաշտամունքային մոր կիրառություն ուներ, ուստի Սյպահան հաստատված հայության առաջին խնդիրը աղոթատուն կառուցելը պիտի լիներ: Հ. Տեր-Հովհաննիսյանի ձեռքի տակ եղել է Ս. Ամենափրկչի կառուցման ու նվիրատուների մասին պատմող մի աղբյուր, ինչպես երևում է՝ ինքնատիպ մի «Քեթթուկ», որտեղից նա ծաղկաքաղ վկայակոչություններ է կատարում<sup>32</sup>: Ըստ այդ աղբյուրի հաղորդման «Աբաս (Ծախ Աբաս առաջին) զմեզ վշտօք եւ նեղութեամբ եբեր ի պանդոխտ եւ օտար աշխարհ, եւ էր մոր փոխեալ թուականն Հայոց եւ մտեալ ՌԾԴ (1605) յառաջնումն ամսեանն Հայոց Նաւասարդի, որ քջեցին զերկիրն Արարսդայ եւ բերեալ Թարում խալխալ եւ Ահար Մուշկի մինչեւ սաստիկ ձմեռն էանց, եւ յետ ասուրց ի զարնան բերեալ ի քաղաքս, որ կոչի Սյպահան... եւ աստ բնակեցոյց ի յեզր Նարնդալային, եւ շինեցաք խնամօքն Աստուծոյ տունս եւ զեկեղեցիս... եւ անուանեցաք զանուն մորս Ամենափրկիչ... եւ շնորհօքն Աստուծոյ վայելեցաք մինչեւ ի ժամանակս յետին Ծախ Աբասին զամս յիսուն եւ մի, եւ յետ այսօրիկ դարձեալ գթացաւ Աստուած ի վերայ ազգիս Հայոց եւ էարկ ի սիրտ թագաւորին յետին Ծախ Աբասին (իմա՛ Ծախ Աբաս Բ - հեղ.) եւ հրաման ետ հանել զազգս Հայոց ի քաղաքէն եւ որոշեաց զմեզ ի միջոց պարսից, եւ ետ մեզ տեղի վայելուչ ի վերայ գետոյն Զանդարու՛ ի վերին կողմն Զուղայու, ի յարեմտեան կողմն ի տեղիս, որ կոչի Մարունան, ի թուականին Հայոց ՌԺԵ (=1656) ամի ի հայրապետութեան ամենայն Հայոց տեառն Հակոբայ սրբասնեալ Կաթողիկոսի եւ յառաջնորդութեան Զուղայու եւ մերոյ նահանգիս Դաւթի արքեպիսկոպոսի, կարողութեամբ Աստուծոյ աստ շինեցաք տունս զեղեցիկս, այգիս եւ պարտեզս եւ բուրաստանս... եւ հիմնարկեցաք եկեղեցի: Սկիզբըն եղել շինութեան մորս ի թվականին ՌԺԸ (= 1659) ամին մինչեւ ի թին ՌԺԺԲ (1663) ամին ասարտ եղել բարձրաբերձ եւ լայնակառոյց եւ անուանեցաք Սուրբ Ամենափրկիչ»:

Քանի որ 1606-ից մինչև 1656 թվականը գոյություն ունեցած պաշտամունքային կառույցը տեղում գրված ձեռագրական բոլոր հիշատակարաններում կոչված է «վանք», և խաչատուր Կեսարացու տապանն էլ գտնվում է այսօր գոյություն ունեցող վանքի եկեղեցու սեղանի տակ, ուրեմն Ծախ Աբաս Բ-ն Հայոց բնակատեղին քաղաքամիջից հանել («որոշեալ») և տեղափոխել է ի սկզբանե Ծախ Աբաս Ա-ի արտոնած վանքի մերձակայքը:

Կարծում ենք՝ Հ. Տեր-Հովհաննիսյանը կենդանի ավանդությունից պիտի քաղած լինի վանքի՝ եկեղեցու կառուցումը Երևանից գաղթածների հատկացնելու վստա-

<sup>30</sup> Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. 2, Երևան, 1934, էջ 81:

<sup>31</sup> Հայ ժող. պատմ., IV, էջ 100:

<sup>32</sup> Թ. Տեր-Յովհաննեանց, Ազվ. աշխ., Բ հատոր, էջ 218-219:

հոբյուռն և կամ՝ վերոբերյալ դրվագում Արարատյան երկրի հիշատակությունը նրան այդպիսի տեղայնացում կատարելու հնարավորություն է տվել: Նոր բնակավայրը Ջուղա (իմա՝ Նոր Ջուղա), իսկ վանքը Ս. Ամենափրկիչ (իմչպես կոչվում էր Հին Ջուղայի նրանց սրբատեղին) անուններով կանչելը ապացույց է, թե այնուամենայնիվ քաղաքիս հայկական համայնքի հիմնական դերակատարները Ջուղայից վերաբնակածները պիտի լինեին: Ընդ որում, նրանք եկել էին իրենց հոգևոր առաջնորդի ու նրա ունեցած միաբանության անդամների հետ միատեղ ու միաժամանակ: Սպահանի մոտ հաստատված այս նորակառույց վանքի վերաբերյալ որոշ տեղեկություններ է պրպտել նաև «Պարսից պատմության» հեղինակ Խաչատուր Ջուղայեցին, համաձայն որի «բայց եւ ընդ որոց շինեցին ի ներ Ջուղայի Նորոյ՝ յաւուրս յայնուսիկ վանք մի փոքրագոյն ի բնակութիւնս միանձանց կրօնատրաց և սոփեստես վարդապետաց, յորում եւ հաստատեցին զաթոռ մետրապօլսի, զի նստցէ անդ արքեպիսկոպոս եւ հովուեսցէ զհօսու Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ ընդ այն ժամանակս էր առաջնորդ նոցա Մեսրոպ արքեպիսկոպոս, որ բարոք քաղաքավարութեամբ եւ գեղեցիկ իմաստութեամբ կառավարէր եւ հովուէր զամենեսեան»<sup>33</sup>: Ձեռագիր հիշատակարաններից Հ. Տեր-Հովհաննիսյանը գիտե, թե այս Մեսրոպը ջուղայեցիներին ուղեկցել է զաղթի ժամանակ, եղել նրանց առաջնորդը բուն Ջուղայում և նույն պաշտոնով հիշատակվել 1613 թվականին<sup>34</sup>: Առ այսօր հայտնի աղբյուրների հիմամբ դժվար է որոշել՝ Մեսրոպի առաջնորդությունը շարունակվե՞լ է մինչև 1620 թ. ներառյալ, թե՞ նրանից հետո և Խաչատուր Կեսարացուց առաջ մեկ ուրիշն է եղել Նոր Ջուղայի և պարսկահայոց հոգևոր պետը:

Ուրեմն Խաչատուր Կեսարացին Նոր Ջուղայում գտավ վանք ու միաբանություն, առաջնորդարան, ուստի և՛ գործող կառույց: Մինչև Խաչատուրի առաջնորդությունը իր գոյության շուրջ 15 տարիների ընթացքում վանքը, ինչ խոսք, չէր հասցնի որևէ կարևոր նվաճում ունենալ՝ զոհանալով տուն ու տեղից քշված համայնքի առօրյա պետքերը հոգալով: Գաղթաշարժի ենթարկվածները դեռ իրենց հայրենի բնօրրանում գտնվելու տարիներին օտար տիրապետողներից անասելի կեղեքման էին ենթարկվում, իսկ ունևոր ջուղայեցիների նշանակալի մասը բնակություն էր հաստատել տարանցիկ առևտրի ճանապարհներին ընկած կենտրոններում: Հիշյալ իրողությունը պարզելու համար ուշագրավ է ջուղայեցիների և ճախիջևանցիների դիմումը Հալեպում հաստատված իրենց համերկրացիներին, որ տեղի համայնքի ավագանին կազմել ու Ազարիա Ֆրիդոնի ձեռքով 1602 թ. ուղարկել է հալեպաբնակներին. «... Մեր վկայութեամբն ի ձեր ողորմութիւնն, որ թէ ինչ դատար եկեղեցոյ խաչ, անետարան, սկի, շուրջառ, մույք, ջաղաց, ասարանոց, իզի լաւ մէշում որ կայ՝ ամէն անարիւնաց թուրքի ձեռնում գրաւ այ, յէնց տառապանք, յէնց վիշտ, յէնց

<sup>33</sup> Խաչատուր արեղաց Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, աշխատութեամբ Բարգէն վրդ. Աղաւելեանց: Վաղ., 1905, էջ 114:

<sup>34</sup> Թ. Տեր-Յովհաննեանց, Աշխ. աշխ., էջ 21:



չտեսնելով, բավական կարևոր հույսեր էին կապում Պապի ու պապականության հետ: Իր առաջնորդության առաջին տասնամյակում Խաչատուր Կեսարացին ոչ միայն վկա էր Աշխալ իրողության, այլ նաև համակիր մի որոշ աստիճանի համագործակցության: Ն. Ակիմյանը, հավանաբար, ինչ-որ գրավոր աղբյուրի հիմամբ է եզրակացնում, թե Սպահանից Հոռոմ վերադարձող Կարմելյան Հովհ. Թադևոսին գրավոր ու բանավոր փափագներ հայտնողների մեջ էր նաև Խաչատուր Կեսարացին<sup>37</sup>: Վերջինին, սակայն, ինչպես նաև նրա ուսուցիչ Մովսես Կաթողիկոսի գործակցությունը անկարելի է որակել իբրև կաթողիկոսության ավանդի շարունակություն: Նրանք հրաշալի գիտակցում էին կարողությունների ու հնարավորությունների տարբերությունը և սթափ դատողությամբ հաշվի նստում կանցության հետ:

Հայոց Եկեղեցու դավանությունը պաշտպանած լինելու, նոր միջավայրում համայնքը կազմակերպելու և մշակութային աշխուժացում ապահովելու համար Խաչատուր Կեսարացին ուշադրությամբ դիտարկում էր արևելք եկող քարոզիչների ստացած պատրաստությունը՝ մասնավորապես 1585 թ. Գրիգոր XIII Պապի տված կոնդակով Հոռոմի հայոց Եկեղեցուն կից բացված վարժարանի դասընթացն ավարտելուց և «Դասանութին ուղղափառութեան Հոռոմէական եկեղեցւոյ» հայերեն ձեռնարկ հրատարակելուց հետո: Նրանց հետ, առավել ևս՝ նրանց դեմ քայլ զցելու համար Խաչատուր Կեսարացին ծրագրում էր միջոցներ ու հնարավորություններ ապահովել ազգային դպրություն ու դավանություն սերմանող դպրոց ստեղծելու և գրաճանաչ հոգևոր սպասավորներին ոչ միայն ծիսական բովանդակություն ունեցող ձեռագրերի ընօրինակություններ, այլև նույնիսկ տպագիր ձեռնարկներ տալու հնարավորություն ստեղծել: Ասել է, թե հանդուգն միտք էր հղացել մահմեդական Արևելքի այդ երկրում յուրովսանն կրկնել տպագրության գյուտը:



<sup>37</sup> ԱճԻ, էջ 386: